Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 39 - Ա
որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր

«ԻՋԵՎԱՆԻ ԹԻՎ 5 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
1-ԻՆ ՄԱՄՆԱՇԵՆՔԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ

1.	Ծրագրի նպատակը	Ծրագրի նպատակն է վերանորոգել «Իջևանի թիվ 5 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության 1-ին մասնաշենքը, որի արդյունքում կստեղծվեն հարմարավետ պայմաններ մանկապարտեզի 120 սաների առօրյան կազմակերպելու համար:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից
3.	Բարեգործը	Հայ Օգնության Ֆոնդ, Նյու Յորք, ԱՄՆ
4.	Ծրագիրը կատարողը	Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղ, քաղաք Երևան 0010, Խորենացու փողոց 22, ՀՎՀՀ 02517115
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Վայրը՝ Հայաստանի Հանրապետություն, քաղաք Իջևան, Բլբուլյան փողոց, շենք 5 Բնագավառը՝ սոցիալական
6.	Ծրագրի բյուջեն	68,226,875 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	«Իջևանի թիվ 5 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2023 թվականի հունվարի 8-ից մինչև 2023 թվականի հուլիսի 30-ը

9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Ծրագրի շրջանակներում իրականացվող աշխատանքների նկարագրությունը. 1. Հատակների և պատերի ծածկույթի, դռների և պատուհանների, տանիքի ծածկի քանդման աշխատանքներ 2. Մասնաշենքի տանիքի կառուցում 3. Միջնապատերի կառուցում 4. Դռների և պատուհանների տեղադրում 5. Ձեռուցման, օդափոխության, ջրամատակարարման, էլեկտրամոնտաժային և հակահրդեհային ահազանգման համակարգերի մոնտաժում 6. Նոր հատակների կառուցում, 7. Գոյություն ունեցող փայտե հատակների նորոգում, հղկում և լաքապատում 8. Ներքին և արտաքին հարդարման աշխատանքներ 9. Մասնաշենքի սանհանգույցների հիմնանորոգում 10. Արտաքին պատերի վնասված հատվածների վերականգնում 11. Մասնաշենքերի միջև գտնվող բակի մասնակի վերանորոգում, մայթերի բետոնացում: Բյուջե՝ 68,226,875 դրամ Ժամկետ՝ 2023 թվականի հունվարի 8-ից մինչև 2023 թվականի հուլիսի 30-ը
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	«Իջևանի թիվ 5 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության 1-ին մասնաշենքի շինվերանորոգման աշխատանքների իրականացում - 68,226,875 դրամ
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Ծրագիրը չի նախատեսում կազմակերպական ծախսեր:

12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Սույն ծրագրի իրականացման շրջանակներում ՀՕՖ-ը համագործակցելու է Տավուշի մարզպետարանի և Իջևանի համայնքապետարանի հետ:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Վերահսկողությունը կատարվելու է Հայ Օգնության Ֆոնդի հոգաբարձուների խորհրդի կողմից, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

17.01.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ